գոյնն, յառաջ քան զբեղմնաւորութիւնն՝ փոքրամարմին, կարմիր, գնդաձեւ և ողորկ միջատ մ՝է, իսկ յետ բեղմնաւորութեան կը դառնայ կը լինի գնդակ մը զուրկ ի թաթից և յեղջերաց և ծածկուած եղջերային թաղանթով։ Թրթուրները կարմրագոյն են, և մինչդեռ որովայնին բաժանմանց վրայ հազիւ աղուամազից հետքը կը նշմարուի, իւր կողից ամէն կողմէն անհամեմատաբար երկայն, կոնաձեւ և սուր փուշեր կ՝արձակէ»։

«Այս միջատս լինելով ամենափոքր՝ հաւաքել առանձին արուեստ մ՝է և զժուարին արուեստ։ Սակայն այս իւր գործածութիւնն շատ նուազեցաւ յետ գիւտի Մեխիքոյի Որդան կարմրոյ, որ թէպէտ նոյն միջատն չէ, սակայն ասոր նման կարմիր գոյն կ՝արտադրէ, թէպէտ և յատկութեամբ շատ ստորին քան զայս»։

«Որդան կարմրոյ առատութիւնն կը կախուի բոլորովին ձմեռնային եղանակի խստութենէ և կամ թեթեւութենէ, ուսկից վերջը կ՝ելլեն ի խնդիր այս միջատիս։ Եւ փորձուած է որ որչափ ձմեռնային եղանակը մեղմաբար անցնի, այնչափ բերքն առատ կը լինի»։

«Գարնան սկիզբը իրենց մեծութիւնը կը հաւասարի կորեկի մը մեծութեան, սակայն աճումին խիստ արագ է, մինչեւ Ապրիլ կը հաւասարին հաղարջի մը հատիկի մեծութեան, որուն կը նմանին մասամբ մը մեծութեամբ և գունովն իսկ։ Մայրերնին կը մեռնի Մայիսի մէջ, և ի վերջ կոյս նոյն ամսոյն կը գտնուին իւրաքանչիւր խոզակին մէջ՝ յորում ամփոփուած էին 1800–2000 հաւկիթք, ուստի պիտի ձեւանային նոյնչափ թրթուրք յետ մի ամսոյ։ Այս խոզակները կը ժողվեն թրթուրներու երեւնալէն առաջ, որ է ըսել Ցունիսի սկիզբները։ Այս միջատաց հաւաքիչքը կը լինին ընդհանրապէս հովիւք, տղայք և կանայք, որք այնպիսի վարժութիւն մը կը ստանան, որ երբեմն կարող կը լինին աւուր մը մէջ ժողովելու երկու լիպրէ որդան կարմիր։ Յետ ժողովելոյ պէտք է ուշ դնել քանի որ թրթուրները հաւկիթներէն չեն ելած՝ հանել եղեղգով մայրը որ ինչպէս ըսինք արդէն մեռած է, սակայն սպասելով որ հաւկիթները իրենց մեծութեան վերջին աստիճանին հասնին, որպէս զի այնու գոյնն եւս առատ լինի ըստ կարելւոյն»[1]։

Վերի հատուածին տեղեկութիւնները կը վերաբերին որեւէ ծիրանի գոյն արտադրող միջատի, և չեն մասնաւորեր Հայկականը։ Տրուած տեղեկութեանց վրայ կարելի է աւելցնել հետեւեալ ամբողջացուցիչ ծանօթութիւնները։ «Գրրմզը անթեւ էգ միջատ մըն է, որ կը գտնուի կաղնիի (Cuercus Coccifera) ծառին տերեւներուն վրայ որ կ՝աճի հարաւային Եւրոպայի մէջ։ Անմիջապէս որ հաւկիթները պիտի զարթնուն, միջատները կը հաւաքուին և տաք քացախի գոլորշոյն ցուցադրուելով կը սպանուին և յետոյ կը չորցուին, այսպէս անոնք թուխ ծիրանիի ցորենահատերու երեւոյթը կ՝առնեն. միջատածիրանիին գտնուելէն առաջ գլխաւորաբար կը գործածուէր Եւրոպայի մէջ, և ծիրանին որ կը գտնուի հին ձեռագործներու մէջ ասոր գործածութեան կը վերագրուի. թէեւ միջատածիրանին նման ներկանիւթ մըն է սակայն անկէ նուազ ազդեցիկ ներկ մըն է գրրմզը, քանի որ ըստ Պանքրոֆթի 10էն 12 լիպրա գրրմզ պէտք է հայթայթելու համար մէկ լիպրա միջատածիրանիի (= cochineal) նման ծիրանի։ Այժմ անգործածելի է իբր ներկ, և միայն պատմական արժէք ունի. գրրմզի ներկի նիւթը գրրմզին է որ հաւասար է քիմիական բաղադրութեան C18 H12 O19 որ մօտաւոր նմանութիւն ունի միջատածիրանիին և ծիրանադեղին»[2]։ Այս սխալաշատ հա-

1. «Բազմավէպ» 1889, էջ 186–187, միջատին եօթը պատկերներով, անսաորագիր։

2. Encycl. Britanica XIV edition, 18 vol. p. 352։ Նման վկայութիւններ նաեւ ուրիշներու մօտ, օրինակ «Գրրմզը ծիրանիորակ մանր միջատ մը (Coccus Ilicis) չորցած մարմինն է որ կը գտնուի որոշ տեսակի կարգ մը կաղնիներու վրայ, մասնաւորապէս Cuercus Coccifera Միջերկրականի, և կը գործածուի իբր ներկ արեւելքի մէջ»։ (Funk & Wagnall. – New Standard